ՅԱՌԱՋԱԲԱՆ

Այս գեղեցիկ ներբողը արտագրել ենք մի ընտիր ձեռագրից թիւ 1366 և ըստ Կարինեանի 1330, որի վրայ մեր ուշադրութիւնը դարձրեց գրադարանապետ Տ. Սահակ վարդապետ Ամատունին։ Նա գրուած է Կիլիկեան ժամանակում, Յովհաննէս արքայեղբայր եպիսկոպոսի համար և մի մասը նրա ձեռքով։ Դիրքը մեծ է (35+26 սանտիմետր)։ ունի 454 թուղթ, գրուած է յղկած հաստ թղթի վրայ, երկսիւն գրութեամբ, բաւական խոշոր և գեղեցիկ բոլորգրով։ կաշեայ կազմը, որ անկասկած շատ հին է և գուցէ նորոգուել է, ընդհանրապէս անվնաս է պահպանել ամբողջը, թէև մի երկու թերթ սկզբից և վերջից պակաս են և տեղ տեղ էլ գրութիւնը մաշուել, անընթեռնելի է դարձել։ Ձեռագրի գլխաւոր նիւթը՝ Յոհան Ոսկեբերանի Գործոց Առաքելոցի մեկնութեան թարգմանութիւնն է, դրա հետ միասին կան մի քանի փոքրիկ գրութիւններ այս կարգով։

1. թղ. 1ա Գլխակարգութիւն մեկնութեան Գործոց Առաքելոց։
2. թղ. 2ա Պատմութիւն յաղագս մատին սրբոյ առաքելոյն Պետրոսի և բերման ի Հռովմէ ի Հայք։
3. թղ. 5բ Երանելոյ սուրբ Հաւրն Մովսէսի Խորենացւոյ քերթողի՝ ի սուրբ Հռիփսիմեանցն գալն